

անաստամ՝ բարբաջանկները առաջադիմութեան և լուսաւորութեան դէմ—Մեր հասարակութեան համար սրանք բոլորովին անպէտ են, վնասակար են: Միայն էջմիածնի երկու չուփստ ու մի կէնտ աստուածաբանների հացը կարող է փոքր ինչ իւզա դառնալ այդ ձրի գրաբարտութիւններից: Հասկանում ենք դատաստը, երեխաններին անդամ յայտնի է դարձել որ առաջադիմութիւնը կեանք է, և միայն վարդապետներն են, որ զգում են թէ ասաջաղիմութիւնը մահ է իրանց համար, ուստի ուզում են մեսելութիւն և անշարժութիւն դնել աշխարհում, այնպէս որ նորից, ինչպէս հին ժամանակներում, վնասարը միայն համարս ուի փրկութիւն: Լաւ երազներ են, եթէ միայն կատարուեն: Վիկաօր Հիւզօն ասում էր, ասաջաղիմութիւնը չէ կարող կանգ տանել, ինչպէս կանդ առնել չէ կարող աշխարհու:

Ահա թէ որքան անընդունակ են էջմիածնի վարիչները, Ահա թէ ինչ տեսակ մտաւոր պաշար կարող են նրանք տար յառը իր պառուզից է ճանաչուում: որա վրայ ոչինչ աւելացնել չէ կարել:

Մնում է յիշատակել այստեղ մի հանդամանք: Գրքի արշ գիւղը յատիկացրած է Շիզալյարական օգնութեան: Բայց այդ համակենի նպատակը չէ կարող բռնել մեր ձեռքը և ծածկել այն պարզ իրազութիւնը, որ այդ գիրքը մի անօգուտ, վնասակար հրատարակութիւն է: Նա անպէտ է իրեն քարոզութիւն, անպէտ է և իրեն զեղարունատական զրուածք:

I.

(3) Dr. Paul Rohrbach: „Die Bagdad bahn“, mit einer Karte, Berlin 1902. (Դ-ր Պ. Ռորբախ ճանապարհի երկաթուղին: 1 քարտ, զանդակութիւն:)

Արեան միջով է բարձրացել սուլթան Աբդիւլ Համիդը իր կայսերական գանձ, արեան միջով է ընթացել նրա երկարատեւթագուրութիւնը: Սակայն միայն արիւնն ու աւերածութիւնը չեն այդ թագաւորութեան բնորոշ կողմերը: Ոչ Սուլթան Համիդը աշխատել է և այլ ուղղութեաւք: Եւա, իրրի խոլանի կամիֆ, ձգտել է ազգեցութիւն ձեռք բներել ամբողջ մահմետական աշխարհում: բացի զանցից նա աշխատել է իր երկրի հազբեղակցութեան միջոցները բարուքել: Եւ այս վերջնը կատարուել է զիխաւորապէս եւրոպացիների ձեռքով, այն ևս չափազանց փոքր և դանդաղ քայլերով:

Այդ տեսակի ձեռնարկութիւնների շաբառում աղլուի գործոց կարող է համարուել Բաղդադի շինուելիք երկաթուղին, որի մասին այնքան խօսուեց ու գրուեց և գեռ խօսուում ու գրուում է եւրոպական մամուլում Տնտեսական աշխարհում զատմնահրատապ հարցերից մէկն է դարձեր Պատճառը հասկանալի է: Երկաթուղու այդ գիծը միջազգային մի նոր ճանապարհ պիտի բաց անէ դէպի Հնդկաստան Շահադրդուած ևն բոլոր եւրոպական պետութիւնները, բայց ամենից շատ Գերմանիան, որովհետեւ նրա ձեռքով պիտի իրականանայ այդ հսկայական գործը:

Դ-ր Ռոբրախ իր ներկայ դրուածքով աշխատում է պարզեր, թէ գերմանացինների համար որքան ձեռնտու է այդ երկաթուղին շինելը: Նա երկու մանգամ ճանապարհորդնել է Թիւրքիայում—(1898 թ. և 1900/1901 թ.)—և գեռ անցեալ տարի զետեղնել էր «Preussische Jahrbücher» ամսագրում իր ճանապարհորդական տպաւերութիւններն ու դիտողութիւնները: «Die Begegnungshäfen» գրքոյկը այդ յօդուածների համառոտութիւնն է, բայց այնու ամենայնիւ բաւականաչափ լուսաբանում է չօշափած ինդիրները:

Առաջին գլխում, որ կրում է «Քաղաքական տեսակէտ» վերնապիրը, հեղինակը խօսում է առնասարակ Ռուսաստանի զինուորական ոյժի և քաղաքական ձգումների մասին—Թիւրքիայի վերաբերմամբ: Նրա կարծէքով Բօսֆորը թէւ ունի մի քանի ամրութիւններ, բայց ոչ այն չափով, որ կարողանայ Ռուսաստանի ուժեղ յարձակմանը դիմադրել: Վերջինիս նաւատորմը Սեւ ծովում բաւական ուժեղ է և կարող է 24—30 ժամուայ ընթացքում յանկարծակի հաննել Բօսֆորի ջրերին և միանգամայն անսպասելի կերպով ամրակոծել նրա ամրութիւնները: Դրանից յետոյ մնում է զարմանալ որ Թիւրքիան մինչեւ օրս հարկաւոր չափով չի ամրացնում Բօսֆորի մուտքը:

Այդ տեսակէտից ոչ պակաս աննախանձելի սպասկեր են ներկայացնում Փոքր-Ասիայի հիւսիսային ափերի ամրութիւնները: Մնում է ցամաքային գիծը: Սպակայ այսուեղ էլ Ռուսատանի համար մեծ գժուարութիւններ չը կան: Թիւրքական սահմանագլխուու՞նակ ունի Ղարսի նման մի անսարքի բերդ, որը երկաթուղու ցանցով միացած է ամրող Ռուսաստանի հետ: Բաւական է մի քանի օր, որպէս զի հարիւր հազարաւոր սոլդատներ ու կօգակներ թափուեն Ղարս և այնաւելից արշաւեն դէպի Հայաստանի խորքը: Ի՞նչ կարող է անել այդ դէպքում Թիւրքիան Ղարսի հանդէպ նա ունի էրզրումը, որը գրեթէ բռնուվին զուրկ է ուազմական նշանակութիւնից, որովհետեւ չու-

նի համապատասխան առրութիւններ երկրի խորքից մինչեւ պատերազմի դաշտը զօրք հասցնելու համար նրան հարկաւոր են աչ թէ օրեր, այլ շարաթներ ու ամիսներ...

Այսպէս ուրեմն Ծուսասատնը հետութեամբ կարող է արել Բօսֆորն ու հիւսիսային Փոքր-Ասիան Եւ ի՞նչ կը լինի այն ժամանակ Բաղդադի երկաթուղու վիճակը Նա կը մնայ պատերազմի դաշտից հեռու և ուստի նամար միանգամայն անձեռնմխելի Հետեւապէս քաղաքական տեսակէաից գերմանացների համար աչ մի երկիւղ չը կայ, որովհետեւ նոյն իսկ ամենածայրական դէպուում նրանց շահերը կը մնան անխախտ ու անվնաս Եւ գուցէ Ծուսասատնը երբէք չուզենայ մի այդպիսի մեծ արշաւանք գործել Թիւրքիայի դէմ:

Բայց այստեղ մի ուրիշ հարց է առաջ գալիս: Գերմանացների համար ձեռնոտն է արգեօք, որ Թիւրքիան մնայ «հիւսանդ մարդու» գրաւթեան մէջ, որ նա խաղալիք լինի մեծ պետութիւնների ձեռքում—Ռէջ պատասխանում է պ. Քօրրախւ Բաղդադի երկաթուղին շինելու համար գերմանացները պիտի ծախսեն ամենապիշը 480,000,000 մարկ, երկաթուղու շրջակայ դաւաններում նոր կուլտուրա, տնտեսական նոր բարեփոխումներ մտցնելու համար պիտի տան նորից հարիւրաւոր միլիոններ, իսկ այդպիսի խոշոր գումարներ դնել մի այնպիսի երկրի ծոցը, որ իր թոյլ կազմուածքով խաղալիք է օտարների ձեռքում—զաւելի քան անմտութիւն է: Ուրեմն Գերմանիայի շահերի տեսակէաից Թիւրքիան ուժեղ պիտի լինի... Թոյլ Թիւրքիայի համար—ո՛չ մի պֆենիզ, իսկ ուժեղ Թիւրքիայի նամար—որքան որ ուզինայ (Եր. 16):

Այս հարցում էլ չափազանց լաւատես է պ. Քօրրախւը: Նա կարծում է, որ Բաղդադի երկաթուղին կը նպաստէ աչ թէ Թիւրքիայի բաժանմանը, ինչպէս ենթաղրում են բարձրաստիճանն թիւրքերից շատերը, այլ ընդհակառակը՝ նա կ'ուժեղացնէ նըրան և զրանով կ'ասպահովէ նրա զոյտութիւնը: Հենց այդ պատճառով էլ նա նպաստակայարեմար է համարում նաեւ միւս պետութիւնների մասնակցութիւնը թէ Բաղդադի երկաթուղու գործում և թէ առհասարակ այդպիսի խոշոր ձեռնարկութիւնների մէջ—Թիւրքիայում:

Դժբախտաբար հեղինակը այստեղ առողջ դատողութիւնը զոհ է երրում իր լաւատես հայեցակէախն: Եւ իսկապէս, միթէ մի երկաթուղու գիծ—որքան էլ որ մեծ լինի նա—կարող է ոյժ ներշնչել մի այնպիսի պետութեան, որը քայլայուած է սնտեսապէս, որ հազիւ շունչ է քաշում արհեստական կերպով: Յայտնի է, որ իւրաքանչիւր պետութեան ոյժը նրա ազգաբնա-

կութիւնն է, որ իւրաքանչիւր երկրի արդիւնաբերական ոյժը նրա ժողովրդի ձեռքումն է: Իսկ Թիւրքիայի ազգարնակութիւնը միանգամայն կազմալուծուած է և նրա արդիւնաբերական ոյժը—ցանքած, որովհետեւ չը կայ կեանքի և զոյքի ապահովութիւն, չը կան արտադրող աշխատանքին նպաստող պայմանակեր Մէկը աշխատում է, իսկ միւսը թալանում. մէկը արդիւնաբերում է, իսկ միւսը—աւերտում եւ պետութիւնը իր ընթացքալ նպաստում է չարէքի զարգանալուն Այժմ մի այդպիսի երկրի միջով պիտի անցնի Բաղդադի երկաթուղին Խոչ կարող է անել նա, եթէ նոյն պայ հանները, նոյն դրութիւնը շարունակուեն ի հարկէ ոչինչ Միայն շողեկառքի շփոցը երրեք չէ կարող Թիւրքիայի սոցիալական չարիքը վերացնել և նրա տնտեսական քայլացումը ընդհատել: Դրա համար անհրաժեշտ են հիմնական բարենորոգութենքը Պ. Տօրբախ աւելի մեծ ժառայութիւն արած կը լինէր, եթէ այդ հարցի վրայ էլ Գերմանիայի ուշադրութիւնը հրաւիրէր Կարծում ենք դա աւելի կարևոր էր, քան թէ Ռուսաստանի ենթադրելի արշաւումքների մասին դատողութիւններ անելը:

Գալով գերմանական գաղոյթներ հաստատելու հարցին, պ. Տօրբախ բացասական կարծիք է յայտնում, որովհետեւ նախակլինան աննպաստ է գերմանացիների համար և երկրորդ՝ Թիւրքիան խորիթ աջով կը նայէ այդ բանի վրայ: Այդ գաւամներից է նա հաւաքում իր զինուարների մեծ մասը, այդուեղ պիտի հաստատէ նա իր գահը, եթէ Եւրոպան նրան երբեւիցէ դուրս արտաքսէ Բայկաննեան թերակղզուց: Ուրեմն նրա համար ցանկալի չէ, որ այդ կողմերում օտար տարրը ու մեղմանայ: Ահա այդ պատճառով պ. Տօրբախը խորհուրդ է տալիս մահմեղականներ լինակեցնել ազատ տեղերում: Գերմանացիները պիտի լինեն միայն զեկավարող ոյժ և ոչ թէ հասարակ աշխատաւոր ներ—երկրագործներ:

Գրքի մնացած երկու դրուխները նուիրուած են այն հարցին, թէ չինուելիք երկաթուղին անտեսական որբան մեծ նշանակութիւն կարող է ունենալ թէ Գերմանիայի և թէ մամաւանդ Թիւրքիայի համար Թիծը անցնում է այնպիսի գաւառների միջով, որոնք հին գարերում յայտնի են եղել իրանց ծաղկած դրութեամբ և խիտ ազգաբնակութեամբ: Նրանք հիմա էլ կարող են այդ միեւնոյն աստիճանին հասնել, եթէ գործ դրուեն որոշ ջանքեր Անտաղիան, հիւսիսային Ասորեստանը և Միջազմաքը կարող են նոյնքան հացանատիկներ արտադրել, որքան ամբողջ Ռուսաստանը, կարող են հարիւր միլիոնաւոր պուդ բամբակ հասցնել Բացի դրանից նրանք իրանց ծոցում պարու-

Նակում նն նաւթի, քարածուխի հարուստ հանքեր, Հարկաւոր է
միայն խելացի կերպով օգտուել բնութեան այդ առաստ տուր-
քերից, Հին ժամանակներում մարդիկ այդպէս էին վարւում և
երկիրը ծաղկած դրութեան մէջ էր

Հարուն ալ Ռաշիդի ժամանակներում (800 թ.) Բաբելոնում, Ասորեստանում և Միջագետքում ապրում էին մոտ 6,000,000 մարդիկ, իսկ այժմ միայն $11\frac{1}{2}$ միլիոն։ Այդ ժամանակներում երկրի աշխազը հասնում էր 700,000,000 մարդի, իսկ այժմ միայն դրա փշտանքներն են ստացվում։ Պատճառը, ի հարկէ, թիւրքական յետամասցութիւնը և վատթար բերդին է։ Պ. Տօրբախի կարծիքով Բաղրադի երկաթուղին և գերմանական ջանքերը պիտի կարօղանան վերականգնեցնել այդ նախանձելի վիճակը։ Գերմանացիները պիտի լինեն միջազգային այդ մեծ ճամապարհի շնութեան ու գործադրութեան ղեկավարը։

b. p.

Դ) ԱՐԵՏԻԳ-ԱՅԱ. — «Կելծաւոր գար». Թարգմանեց Մ. Վ. Մ., Ա-
լեքսանդրապոլ, 1901 թ., գին է 25 կոպէկ:

Իտալացի բնագէտ և յայտնի դրոդ Պաօլօ Մանտէկացցայի այս դրսոյիք, որ մօտ 15 տարի է արդէն լոյս է տեսել, պատկանում է հեղինակի հանրամատչելի աշխատավորթիւնների շարքին։ Մանտէկացցայի կարծիքը կեղծաւորութեան մասին, ինչպէս և վկեղծաւորութիւնը դադափարի վերլուծութիւնը ընդհանրապէ՞՞ կուցէ մի քիչ նորօրինակ, օտարուսի թուի, այնուամենայնիւ դա ունի իր ուսանելի և խրատական կողմերու

Հեղինակը հետևում է կեղծաւորութեան արմաններին դեռ կենդանական աշխարհում, կենդանիների՝ թաշունների, կատուի, միջատների շրջանում կեղծաւորութիւնը արտայացնում է «ձևանալու», «նմանուելու» արամագրութեամբ: Թշնամիներից հետութեամբ պաշտպանուելու համար՝ երբեմն միենայն կենդանին ընդունում է զանազայն դոյն: Հեղինակը պես կենդանական Տարափաներից վերաբերմտմբ իր արած զիտողութիւններից հետաքրքիր փաստեր է հաջորդում մի որոշ տեսակի թրթուոփ և թիթեանիկի մասին: առաջինը նմանուում է ծառի կեղին, իսկ երկրորդը՝ աերեին:

Մարգիկանց մէջ կեզծաւորութիւնն սկիզբ է առնում Ա-
դամ ու Եւայից, որովհետեւ հէնց որ նրանք յանցագործութիւննեց